

ՀԱՅԵՐԵՆԸ ԵՎ ՊԵՆԱՍԻԵՐԵՆԸ

§ 1. Պելասգները Հունաստանի հնագույն բնակիչներն են, որոնք նախքան հույների գալը զբաղեցնում էին Բալկանյան թերակղզու հարավային մասը, Փոքր Ասիայի արևմտյան ծովափնյա շրջանը, այլև որոշ կղզիներ: Հույների կողմից պելասգների համաձուլման պրոցեսը տեղի է ունենում աստիճանաբար: Հույների ճնշման տակ մ. թ. ա. XII — XI դդ. պելասգների մի հատված տեղափոխվում է Պաղեստին: Ենթադրվում է, որ Աստվածաշնչում հիշատակվող փղշտացիները հենց այդ պելասգներն են¹: Մ. թ. ա. I հազարամյակում պելասգները դեռևս պահպանվել էին Հելեսպոնտոսի հյուսիսային ծովափին, Քաղկիդիկա թերակղզում, Թեսալիայում և մի քանի կղզիներում (Իմբրոս, Ուամոս, Լեմնոս): Այս մնացորդներն էլ աստիճանաբար ձուլվում են հույների հետ և դադարում որպես ինքնուրույն ժողովուրդ գոյություն ունենալուց:

Բնականաբար պելասգները մեծապես ազդում են հունական մշակույթի և լեզվի վրա: Պելասգերենը հանդես է գալիս որպես հունարենի ենթաշերտ (սուբստրատ). հունարենի մեջ բացահայտվող այսպես կոչված մինչհունական տարրերը համարվում են հիմնականում պելասգյան, և «մինչհունարեն» ու «պելասգերեն» անվանումները հետազոտողների գերակշռող մեծամասնության կողմից նույնացվում են: Թե որքան մեծ դեր են խաղացել պելասգները հունական պատմության մեջ, երևում է հենց նրանից, որ հին հեղինակները հույներից երբեք կոչում էին պելասգներ:

§ 2. Երկար ժամանակ գիտության մեջ իշխում էր այն կարծիքը, որ պելասգերենը հնդեվրոպական լեզու չի եղել: Այդ կարծիքը հատկապես լայն ճանաչում է ստանում Պ. Կրեչմերի հեղինակավոր աշխատությունից հետո, որտեղ հավաքված էին մինչհունարենի (պելասգերենի) շատ փաստեր²: Պելասգերենի՝ ոչ-հնդեվրոպական լեզու լինելու տեսակետը հատկապես հավանական էր երևում այն ժամանակ, երբ Փոքր Ասիայի ժողովուրդների լեզուները համարվում էին ոչ-հնդեվրոպական և Պ. Կրեչմերի կողմից միավորվում ցեղակցական կապով: Խեթերենի և փոքրասիական հնդեվրոպական այլ լեզուների պատկանելիության հարցի լուծումը, բնականաբար, առիթ է տալիս մինչհունարենի (պելասգերենի) բնույթի վերանայման համար: 1930-ական թվա-

¹ Ոմանք փղշտացիներին վերագրում են իլիրիական կամ վենետական ծագում. հմտ. R. Hauschild, Die indogermanischen Völker und Sprachen Kleinasien, Berlin, 1964, էջ 69—70:

² P. Kretschmer, Einleitung in die Geschichte der griechischen Sprache, Göttingen, 1896: Իր «Հայոց լեզվի պատմության» մեջ Հ. Աճառյանը լիովին հենվում է Կրեչմերի տվյալների վրա:

կանների երկրորդ կեսից Վ. Գեորգիևը, ապա նաև Ա. Յ. Վան Վինդեկենսը, Վ. Մեռլինգենը, Օ. Հասսը և ուրիշները վերջնականապես ապացուցում են պելասգերենի հնդեվրոպական ընդլիժը: Եղած մնացորդների հիման վրա նրանք հիմնական գծերով վերականգնում են պելասգերենի հնչյունական և բառակազմական առանձնահատկությունները, այլև բառապաշարի շատ տարրեր³:

§ 3. Պելասգերենը որպես հնդեվրոպական լեզու ունի հնչյունական հետևյալ կարևոր առանձնահատկությունները.

1. Բաղաձայնական համակարգը. հայերենի նման, ենթարկվում է տեղաշարժի՝ հ.-ե. bh, dh, gh > պել. b, d, g. հ.-ե. b, d, g > պել. p, t, k. հ.-ե. p, t, k. > պել. ph, th, kh (հազվադեպ բառերում միայն շնչեղացում չի նկատվում, որ բացատրվում է փոխառության տարբեր շրջանների առկայությամբ):

2. Բառի մեջ երկու շնչեղ բաղաձայնների հանդիպելու դեպքում տեղի է ունենում առաջին բաղաձայնի տարնմանական ապաշնչեղացում:

3. Հնդեվրոպական քմայնացած ետնալեզվայինները (gʰ, gʷ, kʰ) վերածվում են առաջնալեզվային շփականների, որոնք հունական փոխառություններում արտահայտվում են յ-ով (z ?) ու ց-ով և յ-ով ու փ-ով: Այսպիսով, պելասգերենը հայերենի նման, satəm տիպի լեզու է, թեև քմայնացած բաղաձայնների փոփոխությունը, ինչպես տեղաշարժի դեպքում, տարբերվում է հայերենից:

4. Հնդեվրոպական շրթնայնացած ետնալեզվայինները, ինչպես հայերենում, ապաշրթնայնանում են՝ հ.-ե. gʷh, gʷ, kʷ > պել. g, k, kh:

5. Հնդեվրոպական s-ն, ի տարբերություն հայերենի, բառասկզբի և բառամիջի դիրքում պահպանվում է:

6. Հնդեվրոպական ձայնորդները պահպանվում են, ընդ որում վանկարար ձայնորդները (r, l, m, n), ի տարբերություն հայերենի, տալիս են ur (ru), ul, um, un (հայերենում՝ ar, al կամ al, am, an):

7. Հնդեվրոպական ձայնավորների և երկբարբառների քանական և որական տարբերությունները հիմնականում պահպանվում են. նշելի է, սակայն, որ հ.-ե. o-ն, ինչպես ինքնուրույն գործածության դեպքում, այնպես էլ երկբարբառներում, փոխվում է a-ի (հայերենում այն հիմնականում պահպանվում է), իսկ ə-ն, ինչպես հայերենում, տալիս է a:

§ 4. Հնդեվրոպական հնչուլթային համակարգի՝ պելասգերենում, հունարենում և հայերենում տեղի ունեցած հիմնական փոփոխությունները կարելի է արտահայտել հետևյալ աղյուսակով (առնվում է բառասկզբի դիրքը)⁴.

³ Մինչհունարենի կամ պելասգերենի համար հիմնական աղբյուրներ են ծառայել հետևյալ աշխատությունները. V. Georgiev, Vorgriechische Sprachwissenschaft, 1—2, Sofia, 1941—1945. B. Георгиев, Исследования по сравнительно-историческому языкознанию, М., 1958. A. J. Van Windekens, Le pélasgique, Louvain, 1952. Նույնի Contributions a l'étude de l'onomaistique pélasgique, Louvain, 1954. Նույնի Etudes pélasgiques, Louvain, 1960. W. Merlingen, Das „Vorgriechische“ und die sprachwissenschaftlich-vorhistorischen Grundlagen, Wien, 1955. Նույնի Zum „Vorgriechischen“, „Linguistique balkanique“, IV—V (1, 2), Sofia, 1962. O. Haas, Die Lehre von den indogermanischen Substraten in Griechenland, „Linguistique balkanique“, 1, Sofia, 1959.

⁴ Նկատի ունենալով բաղաձայնախմբերի, այլև ետնալեզվային և առաջնալեզվային բաղաձայնների՝ քմայնացման հետևանքով առաջացած փոփոխությունների բարդությունը—

Հ.-Ժ.	Պեղասգ.	Հուե.	Հայ.	Հ.-Ժ.	Պեղասգ.	Հուե.	Հայ.
bh	b	բ	բ	բ	ur/ru	ար, բա	ար
dh	d	ծ	դ	լ	ul	ալ, լա	ալ, աղ
g'h	z (շ), ծ	չ	ձ	m	um	ա	ամ
gh	g	չ	գ	օ	un	ա	ան
g ^u h	g	փ(փ)	գ	i	i	ի	ի
b	p	փ	պ	i	i	ի	ի
d	t	ծ	տ	u	u	ու	ու
g'	s, փ	չ	ծ	ū	ū	ու	ու
g	k	չ	կ	e	e	ե	ե
g ^u	k	ֆ(ֆ)	կ	e	e	ի	ի
p	ph	պ	հ	o	a	ո	ո
t	th	տ	թ	ō	ō	ու	ու
k'	s, փ	չ	ս	a	a	ա	ա
k	kh	չ	ք	ā	a	ա	ա
k ^u	kh	պ (շ)	ք	ei	ei	ե	է
s	s	ս (հ)	հ, լ, —	oi	ai	ու	է
r	r	ր	ր	ai	ai	ա	ա
l	l	լ	լ, ր	eu	eu	ե	ո
m	m	մ	մ	ou	au	ու	ո
n	n	ն	ն	au	au	ա	ա
i	h (?)	ս (հ), չ	չ	ə	a	ա	ա
u	u, h, —	F > —	դ				

§ 5. Պեղասգերենի հետազոտողները այս կամ այն չափով ուշադրություն են դարձրել հայ-պեղասգյան հնչյունական և բառային մի շարք զուգաբանությունների (իզոգլոսների) վրա: Որպես ընդհանուր գծեր կարելի է մատնանշել հատկապես բաղաձայնական տեղաշարժի առկայությունը, սատեմային բնույթը, շրթնախցած բաղաձայնների ապաշրթնացումը, ծ > ա փոփոխությունը և այլն: Գարեկոր տարրերիչ հատկանիշներից են հ.-ե. s-ի, o-ի, r, l, m, n փոփոխության ձայնորդների, i-ի և u-ի տարբեր փոփոխությունները:

Առաջին հեղինակներից մեկը, որ հատուկ ուշադրություն է դարձրել հայ-պեղասգյան ընդհանրությունների վրա, եղել է Օ. Հասսը⁵: Նա ոչ միայն նշում է հայ-պեղասգյան ծագումնային կարևոր զուգաբանությունների առկայությունը, այլև խոսում է հայերենում պեղասգերենին մերձավոր ենթաշերտի առկայության մասին: Հասսը մատնանշում է բառային մի շարք ընդհանրություն-

⁵ Օ. Հասսը աղյուսակում չեն բերվում հմտ., օրինակ. հ.-ե. gh, g^uh > հայ. զ, հ.-ե. kl > հայ. չ, հ.-ե. dl < հուե. չ, հ.-ե. tl, kl > հուե. տ (շ), հ.-ե. pl > հուե. պ և այլն:

⁵ O. Haas, Die Lehre der indogermanischen Substraten in Griechenland, LB, I, էջ 46—48. Նույնի Armenier und Phryger, LB, III, 2, էջ 50—51. Նույնի Die griechischen Sprachdenkmäler, LB, X, 255—256:

նեի, որոնց մեջ առկա են հ.-ե. $p >$ պեւ. $ph (> phi$, հուն. նշանակմամբ ψ) և հայ. φ , ալի հ.-ե. $o >$ պեւ. a և հայ. $ա$ հնչյունական զուգահեռները և այլն.

ψαυρος «արագաշարժ, թեթև, քնքուշ» — փոքր⁶.

ψυχή «շունչ, հոգի» — փութ.

ψυχρος «սուր, արոտված» — փութ.

ψυχιον «փշուր» — փռի⁷.

Օ. Հասար բերում է նաև հայ-հունական մի շարք ընդհանրություններ, որոնք ըստ նրա «նախալեզվային» բնույթ չունեն (հնդեվրոպական նախալեզվից չեն գալիս).

αις «այժ» — այժ.

γεφύρα «անջրպետ, կամուրջ» — կամուրջ.

ἱξάλος «ցատկող, աշխույժ» (այժի մասին) — քաղ «արու այժ, նոխազ».

παριένος «կույս» — հարսն.

γχεπος «ապաստան» — ցիւ-ք.

§ 6. Հայ-պեղանդյան բառային զուգարանությունների առաջին խումբը կազմում են այն բառերը, որոնք հանդես են բերում հատուկ մերձավորություն հետևյալ հատկանիշներով.

1) Հիմքակազմական տիպով.

αριήμης «թիվ» — հարիւր, -ոյ (?)

αφ(ε)νος «հարստություն, առատություն» — աւն «ինչք, ունեցվածք».

βολβός «սոխ» — բողբոջ⁸.

κλώθω «հլուսել» — կղթել «հանգուցել, ամուր կապել» (?)⁹.

κορυφή «գագաթ» — կառափն¹⁰.

ομβρος «տեղատարաի անձրև, հեղեղ» — ամպրո-պ.

παριένος «կույս» — հարսն.

πλῆθον «(եփեղու) տախտակ, տապակ, թիթեղ» — լայն.

2) Արմատի կազմության առանձնահատկություններով (յուրահատուկ բաղաձայնով, բաղաձայնի կամ ձայնավորի հերթագայման տիպով).

καχάλω «քրքջալ» — խխանք.

μυχός «սեղծին անկյուն» — մուխ, մխմ.

σμυχω «դանդաղորեն ալրել» — մուխ, -ոյ.

φοινός «ալ-կարմիր» — *հուն, հն-ոց (հմտ. հուր).

⁶ Ի՞նչ ψαυρος բառը ծագում է հ.-ե. bheug- «փախչել» արմատից, ապա թերևս հայերեն վախճիմ բայի աղբյուրը հենց նա է և ոչ թե խեթ. parh- «հալածել, քշել, արշավել, սուրալ» բայը:

⁷ Հմտ. և փշուր: Օ. Հասար հաշվի չի առնում այս բառերի կովկասյան զուգահեռները: Տե՛ս Г. В. Д ж а у к я н, Новые урартско-индоевропейские параллели, «Известия АН АрмССР», 1965, № 3, էջ 40—51:

⁸ Պեւ. բառը բխեցվում է հ.-ե. bheil- «ուռչել, բղիւլ» արմատից, հայ. բառը՝ նրա տարբերակը հանդիսացող bheil- «տերև, ծաղիկ, ծաղկել, բողբոջել, բողբոջ» ձևից:

⁹ Հայ. բառի ստուգաբանությունը հեղինակինն է:

¹⁰ Պեւ. բառը բխեցնում են հ.-ե. ger- «պտտել, ոլորել» կամ ցւբը- «լեռ» արմատներից, որոնցից այս դեպքում ծագում է նաև հայ. բառը: Սակայն ավելի հավանական է երկուսն էլ գիտել իրրև փոխառություն և բխեցնել հ.-ե. k'er- «մարմնի վերնամաս» ցյուլ, եղջյուր, գագաթ» արմատից:

χαλάω «արձակել, թողնել» — խաղաղ (?)¹¹.

χαλί-φρων «թեթևամիտ» — խաղ (?)¹².

χόριον «ընկերք, թաղանթ, փորոտիք» — խոր (?)¹³.

§ 7. Մնացած դեպքերում բառային զուգադիպումների ձևավորմամբ և ղրանց իմաստային առանձնահատկություններով հայերենը պեղասգերենի հետ առանձին մերձավորություն չի ցուցաբերում: Շատ բառեր հանդես են բերում իմաստային զգալի հեռավորություն՝ պատկանելով միեռնույն արմատների իմաստային տարրեր զարգացում ներկայացնող խմբերի: Ստորև բերում ենք այդ զուգադիպումները՝ խմբավորելով ըստ հ.-ե. բաղաձայնների տիպերի¹⁴:

1) Հ.-ե. bh, dh, gh.

βαλιος «ճերմակ բծերով, խալտախարիվ, պտավոր» — բալ, -ի, -ից «մեզ, մշուշ, մառախուղ».

βαλλάντιον «քուակ, պարկ», ἀρύ-βαλλος «պարկ. աման (նեղանցք)», βόλινθος «վալրի ցուլ», βόλβιθος, βόλβιτον, βόλιτον «գոմաղբ, թրիք», βολέων «գոմաղբի կուլտ» — բեղուն, բղջ(-ա-խոհ).

βάσχειν «ասել» (Հեսիքիոս), βάσχανος «չարախոս, զրպարտիչ, կախարհող, չար կախարդանք ուղարկող» — բան, -ի, -ից, բալ, -ի, -ից, բամ-բասեմ.

βαυνός, βαυνος. βαύνη «հնոց, բով» — բով¹⁵.

βλαστάνω «ծլել, ընծլուղել, ծագել» — բող «ծիլ, բույս», բողկ, ալլև բղխել (?)

βόναστος «վալրի ցուլ» — բոլն, բուն, բոյս.

βορεας «հյուսիսային քամի» — բուռն (?)¹⁶

ἀρβόν «թուլլ, նուրբ բան», ἀρβάχης «հազվադեպ» — որբ, -ոլ.

ομβρος «տեղատարափ անձրև, հեղեղ, ջուր» — ամբ, ամպ, -ոլ.

ουνεω «թափահարել, շարժել, տատանել. հալածել, քշել», ալլև թերևս Կոմբոս «զառամյալ, մահամերձ, ուժասպառ» (Կոմբոսյան և ալլև բառերում) — դեղևիմ «երերալ, տատանվել».

ορᾶω «անել, կատարել» — դերբուլ «խորդուբորդ տեղ, 'առապար», ալլև դերև¹⁷.

πύνδαξ «ամանի տակ, հատակ» (հ.-ե. bhundh-) — ան-դունդ, -ոլ.

τάρχανος «քաջախ» (*«դառնալ, խառնել» իմաստից) — դառնամ, դարձ, ալլև թերևս դառն.

¹¹ Ըստ Վ. Մեռլինգենի («Die Sprache», IV, 60, ալլև Zum «Vorgriechischen», LB, էջ 39), որ այստեղ է միացնում նաև ոռևս. на-хальныи բառը:

¹² Ըստ Վ. Մեռլինգենի («Die Sprache», IV, 60, ալլև LB, V, էջ 39), որ այստեղ է միացնում նաև ոռևս. ХОЛИТЬ «խնամել» բառը:

¹³ Խոր բառը չունի հավաստի ստուգաբանություն: Պել. բառի ստուգաբանության հավաստիության դեպքում հայ. բառը շատ լավ կապվում է նրա հետ:

¹⁴ Ավելորդ ենք համարում թվել հ.-ե. ծագում ունեցող վերջածանցները (պել. -μν-, -ον-, -λ-, -νυ-, -ρ-), որոնք կրում են սովորական փոփոխությունները:

¹⁵ Հայերենի հետ համեմատությունը պատկանում է Վ. Գեորգիևին:

¹⁶ Համեմատությունը կասկածելի է, որովհետև ոռևս. οὐραν բառը, որի հետ համեմատվում է βορέας-ը, չի հանգեցվում հ.-ե. bher-ին («եռալ»):

¹⁷ Եթե ճիշտ են Վ. Գեորգիևը և ուրիշները, որոնք հ.-ե. dherbh-ը («աշխատել») բխցնում են dher- «պահել, բռնել» արմատից:

τράγος «արու ալծ, քաղ» (*«ցատկող, վաղող») (հ.-ե. dhreggh-) — դուրզն¹⁸.

τῦμβος «դամբան, գերեզմանաթումբ» — դամբան, դամբարան¹⁹.

τῦρσις «աշտարակ, բուրգ, ամրոց», ա-τῦρσις «անկայուն (?)» (<«չպահ-վող») (հ.-ե. dhrg'h-, durg'h-) — դարել, դադար:

2) հ.-ե. b, d, g.

ταμίς «տնտես. տեր»²⁰ — տուն.

ταμίχος «աղած ուտելիք» (հատկապես ձուկ), պահածո. մումիա» (<հալ-տառելի), տերմուսիս «գետնահաս, մինչև կրունկները հասնող» («կաշվե»?), ա-տերմուսիս «կոպիտ, կոշտ, դաժան»²¹ — տեռ, -ի, -ից «կոշտուկ», տեռեմ «քեր-թել», տեռ «շղարշ».

τέλος «կատարումն. վախճան. սահման. նպատակ. տուրք. տող, շարք» — տող, -ոյ.

τέντω «կրծել» (հ.-ե. denkh-) — տատասկ (հ.-ե. dekh-).

τέρεβινθος «տերեբինթի ծառ» — տարգալ, տրամ «ամուր, պինդ».

τέρετρον «խալժ» — կլանեմ, կուլ.

τόχος «կատար, փուփուկ» (Հեսիքիոս), τόχος «կորիզ», τόχος «կոն, կոնգոմ, պիստակ» — կոկոն, կոնգոմ, ալլե կոն²².

τόχος, -όν «պատյան» — կալում.

τόρος, -υδος «սաղավարտ. գլուխ, գլխիկ», ալլե «տրսնմեծ» «կողով. աքաղաղ» (երկրորդ իմաստով՝ որպես «կատարավոր») (հ.-ե. ἄ-εἰ-, ἄ-οἰ-) — կառափն (?)²³.

τόρος «տղակ, մատանի», τὸρσανά «խառնել», τὸρσανός «գավաթ», τὸρσαν (հալց.) «գնդակ, շրջան, ոլորտ» (Հեսիքիոս) — կոր-.

τόρβη «գավաթ. մակույկ», τὸρβος «աման», τὸρβαν «գավաթ. ծնծղա» — կումբ «վահանի ուռած մասը. պորտ»²⁴:

3) հ.-ե. p, t, k.

πάθος. πένθος «գոթախտություն» — հիւանդ.

¹⁸ Դուրզն ձևը բխեցնում են dhrggh- նախաձևից, որ հավանական է (r > ուր?), եթե չենթադրենք պելասգերենին մոտ մի լեզվի ազդեցություն:

¹⁹ Հավանաբար պատահական է պել. τῦμβος-ի և հայ. բուրբ-ի նմանությունը. վերջինս բխեցնում են հ.-ե. teu- «ուռչել» արմատից:

²⁰ հ.-ե. dem- «կառուցել» արմատից են dom-, dmp- «տուն» և demə- «գսպել» (<«ընտելացնել») ձևերը. վերջինիցս ծագում է պել. ἀ-τῦρ «ծառա, ստրուկ» բառը:

²¹ Ըստ Հ. Ֆրիսկի՝ վերջին բառը ծագումով նույնն է τείρω «տրորել» բայի հետ (*τέριχα):

²² Բխեցնում են հ.-ե. gug-ից, բայց հմմտ. geng-, gong- «գունդ, կոշտ», gongu-s «գունդ, գնդակ»:

²³ Հմմտ. § 6, «տրսփ» «գագաթ» — կառափն դուգարանության ծանոթությունը: Հմմտ. նաև հայ. կառուցանել «կանգնեցնել, հաստատել, շինել», կարկառ «բարակույտ», որոնց հարաբերությունը այստեղ նույնպես պարզ չէ:

²⁴ Եթե վերջինս հ.-ե. ger- «պտտել, ոլորել» արմատից է և ոչ *gouero- ձևից, որ պատկանում է geu- «ծռել» արմատին:

²⁵ Հայերենին ավելի լավ են համապատասխանում հուն. τὸρβη «գլուխ», τὸρβος «սաղավարտի սայր» բառերը, որոնք հատկացվում են միևնույն արմատին, ինչ պել. հիշյալ բառերը (keu-, kumbh-): Սրանք դիտվում են որպես թափառական բառեր կամ փոխառություններ (դեռևս հ.-ե. շրջանում): Հայ. բառը Հ. Աճառյանը (Հայ. արմ. բառ., 3, էջ 1403—1404) բխեցնում է հ.-ե. gumb- ձևից (geu- «ծռել»), որ, սակայն, պետք տար *կումպ:

φάτνη. παύνη *սմսուր*—հաւրան *սհոտ* (ոչխարի, ալծի), հաւտ, հովիւ (*oui-pā *ոչխարապահ*).

φαῦλος *սաննչան, վատ*—*ուլ, թերևս նաև փոքր*.

φάλη *սգալաթ*—*ըմ-պեմ*.

φύλα *սլորի*—*թեղի*²⁶.

φλέω *սառատ լինել*—*լի, լնում, չի (?)*, հոլով, հեղեղ, ողողեմ²⁷.

φως.-τος *ստղամարդ, ալր. ազնվական. հերոս. ամուսին*—*հոյ(-ա-կապ)*, *թերևս նաև հալ*.

ασχέω *սմշակել. դարդարել. վարժեցնել* (հ.-հ. op-s-k-)*—աւն սինչք, ունեցվածք* (հ.-հ. op-)²⁸.

ὄμ-φαξ *սխակ խաղող*—*հաց* (հ.-հ. pek^u-) (?)

θάλαμος *սսնյակ, առանձնասնյակ. տուն, բնակարան. բնակավայր*, θέλυμα, θέλυμα (հզն.) *ստարերք. հիմք. հիմունք*—*թաղ, թաղեմ, թիթեղն*.

θριγγός, θριγγός. θριγγός, τριγγός *սքիվ, կառնիգ. պատի առաջնավոր վեր-նամաս. պատ. բարձր աստիճան*—*առիք (?)*²⁹.

θρίναξ *սեռաժանի*—*երեք, երի*.

θρίψ *սուտիճ, փայտուտիճ, որդ*—*թրթուր, ալլե թուր, թուրծ, արածեմ* (*trəg'-).

χοριον *սընկերք. թաղանթ. փորոտիք*, γρόνος *սժամանակ*—*քերեմ քորեմ*.

χῶλος *սկաղ*—*խեղ*.

4) հ.-հ. g'h, g', k'.

ἄσθμα. ἄσθμα *սշնչարգելութիւն* (հ.-հ. ang'h(u)-tm-), *սթմոս սմիաց-նող շերտ, նեղ անցք, պարանոց* (հ.-հ. eng'h(u)-tm-)*—անձուկ*.

σάπιγξ *սփող, փողի ձայն* (հ.-հ. k u-ni-n-)*—սուլեմ* (հ.-հ. k'eu-lo-), *շունչ*.

σεργαί *սեղնիկներ* (շեսիքիոս) (հ.-հ. k'eu-)*—սար*.

ἀθήρ *սքիստ* (հասկի)*—ասեղն*³⁰.

5) հ.-հ. g^uh, g^u, k^u.

-χον *ս-սպան* (Κεριοχονία—*դիցանուն*), *չինձաճ սարագաշարժ, շարժուն*, *օնո-չինձոս սիշապան, էշ վարող*—*գան, -ի, -ից, ջին, ջնեմ, ջինջ, ջնջեմ*.

κῶας *ոչխարի կաշի. բուրդ, գեղմ*—*կով (?)*³¹.

²⁶ Եթե պելասգերեն և հայերեն բառերը կապված են արմատական բաղաձայնների tp/pt դրափոխությամբ:

²⁷ Սրա հետ են կապում և բլեցնում հ.-հ. pel- արմատից նաև ὀφέλλω *սավելաց-նել* բայը, որի համար ուրիշները, նկատի ունենալով հայ. յ-աւելում, առաւելում բայա-ձևերը, վերականգնում են հ.-հ. obhel- նախածեղ (Pok., 1, էջ 772): Հմտ. նաև ուրարտ. abillidu- *սավելացնել*:

²⁸ Հմտ. § 6, ἄφ(ε)νος—*աւն դուգարանութիւն*:

²⁹ Վ. Գեորգիևը համեմատում է բուլղ. стърча, շխ. (s)trceti, ռուս. торчат *սցղվել* բառերի հետ, որ կասկածելի է: Վ. Մեռլինդենը (LB, V, էջ 24) վերականգնում է *trenq- նախածեղ՝ առանց համապատասխան դուգահեռների: Եթե ճիշտ է համեմատութիւնը հայ-յերենի հետ, ապա պետք է ենթադրել հ.-հ. tre(n)k- նախածեղ:

³⁰ Նույն հ.-հ. արմատից են բլեցվում նաև ἄλυσθα *սփուշ*, *աչոյ սժանծ. խղող*, *աչսթո սժանծ. խղուզ, թեփ*, *աչար սթեփ* բառերու:

³¹ Ըստ Վ. Գեորգիևի Սյլ հեղինակներ շօաճ բառը համարում են բուն հունական և բլեցնում հ.-հ. (s)keu- *սժածկել* արմատից:

6) Հ.-հ. s, su.

σαλ(υ)βη «բացվածք, անցք», σελ(υ)γη «լուսին», σελας «փալ» (suel, sel- «վառվել») — քաղց, քաղցնում.

σπιβδος «դանարժան, անպիտան. փախստական» (Հեսիքիոս), արև σειβω «տրորել, կոխել» — ստէպ, ստիպեմ.

σπεβλός «ծուռ, թեք», σπεβλόω «ոլորել, փաթաթել, շիլ» — թարբ, թարփ «ծուռ ուսալու կողով. վանդակաձև հյուսվածք. վանդակապատ», թերևս նաև թարփափել «կցորդել» (Երեմ. բառ.)³².

σύριχος «դամբուղ, կողով», σύριχος «հյուսված աման» (հ.-հ. ser-) — լեռում շշարել, միացնել:

7) Հ.-հ. r, l, m, n, i, u.

αριμός «թիվ», ρυμός «ոխիթմ» — առնեմ, լար, լարեմ, արդ, դ-արդ, արդ «հիմա», արդար, լարմար.

αλείφω «ոծել, քսել» — հալ. լիրբ, լպիրշ, լպիրծ³³.

μαλερός «մանրող, փշրող» (?), μαλερὸν «ալյուր» — մալել «մանրել, փշշրել», մլաղաց (մուլ-), մեղկ, մեղմ, մղմող, «ցեց», մուղ «ցորեն աղալը» (բրբռ.).

μανθάνω «ուսուցանել, տեղեկացնել, իմացնել» — իմանամ.

μίλτος «կարմիր ներկ», μέλλος «կարմիր գույն» — մեղեսիկ, մելեսիկ «մի թանկագին քար, սուտակ» (?)³⁴.

μίνυνθα «մի քիչ», μινύθω «սվազեցնել» — մանր, մանուկ, մանչ³⁵.

ἄμῃσω «թիակներ (կազմախոս.)» — ուս, -ոյ.

ν- «ան-» (ναιτίς, ναιրος «ծուլ» < «ոչ արագաշարժ») — ան-

αἰσαχος «մրտենու կամ դափնու ճյուղ» (հ.-հ. uois-) — գի, -ոլ (գիհի) «մի տեսակ ծառ».

ἐιμίγγες, ἐιμινθες «փորի ճիճուներ» (հ.-հ. uel-), ἐιβινθι «սիսեռներ» (Հեսիքիոս) — գելում, գիլ, գլեմ, գլորեմ, գալար, գաղձն, ալլե լար, թերևս լամբ.

ἐλ(υ)γη «մաղ. բուրդ» (հ.-հ. ulodn-?) — գեղմն:

§ 8. Հալ-պեղանդյան ծագումնալից զուգահեռությունների թվարկումն ավարտենք բնածայն բառերի և ոչ հավաստի մի շարք զուգահեռների մատնանշմամբ.

1) Հետևյալ բառերում նկատվում է բնածայնությունների համար սովորական շեղում հնչյունական համապատասխանություններից.

ἀπαφος «հոպոպ» (Հեսիքիոս) — հոպոպ:

2) Հետևյալ բառերում, հնդեվրոպական նախալեզվում արմատային զուգաձևերի առկայություն հետևանքով, նկատվում է պեղանդերենի և հայերենի սատեմային զուգահեռություն թվացող խախտում.

³² Հայերեն բառերի ստուգաբանությունը հեղինակին է [հ.-հ. (s)terb(h)- «ոլորել, փաթաթել» (s)ter- «պինդ, հոծ. ցողուն» արմատից]:

³³ Իթե հ.-հ. leip-ը ծագում է lei-ից: Այդ զեպում պել. և հայ. բառերը գալիս են տարբեր աճականներով ձևերից [leip-, leib(h)-]: Ձևով ավելի մոտ է ἐιβινθι (Հեսիքիոս) բառը: Հմմտ. և ἐιμινθες «որդեր, ճիճուներ» (Հեսիքիոս), ἀπαφος «զրպարտիչ, լրտես»:

³⁴ Հայ. բառի ծագումն անհայտ է. համեմատությունը ճիշտ է, իթե այն պատկանում է հ.-հ. mel- արմատին (զույն նշանակող):

³⁵ Ծագում են հ.-հ. mel- (mi-nu- «փոքր») և men- արմատներից, որոնք իրար մոտ են համարվում:

αι-αἶων «ծնոտ» [հ.-հ. g'(i)eu- «ծամեի» — կիւ, -ոյ «ծամոն», կուենի «մի տեսակ ծառ» [հ.-հ. g(i)eu]։

3) Կան մի շարք կասկածելի դուգահեոներ, որոնց մեջ մտնում են Օ. Հասսի նշած՝ պել. ψ (<*phi) — հայ. փ, պել. ζ (<*khi) — հայ. ք հնչյունական համապատասխանություններով բառերը (դրանց մեծ մասը բերվեց § 5-ում)³⁶։ Ստորև կնշվեն մի շարք այլ դեպքեր.

αανθια «ականջողեր, գինդեր» (Հեսիքիոս) — ունկն (*us-on-ko-m), ականջ. γῆ. γῆα «երկիր» — գաւառ³⁷.

δῆω «թրջել, ոռոգել» — ձև, ձուլ, ձուլում (հ.-հ. g'heu-).

αυρεῖω «ցատկել» — խրտնում, խրտչիմ.

ὠνῶ «լուս» — լու, -ոյ.

ὠν «սփռում, հոտում» — հու «շարավալից արյուն» (?)³⁸.

φῶς «պահպան» (դոնապան, դարպասապահ) — փող³⁹.

χαλῆ «կարկուտ», χαλῆ «մանր քար, խիճ», χαλῆ «քար, խիճ» (հ.-հ. kal-?) — խաղխաղ «ծովի խուլթ», խարակ, խաղալարտ «պալար, ուռուցք», խաղճ «կոճիկ», խաղուարտ «դեղին վարունգի հունդ».

κρεῖω «հրել, վիրավորել» (հ.-հ. kreu-) — խրել։

4) Մի քանի խոսք երբայերեն և փյունիկերեն այն բառերի մասին, որոնք դուգահեոներ ունեն հունարենում և որոնց այդ նկատառումով հետազոտողները վերագրում են փղշտական կամ պելասգյան ծագում⁴⁰։ Այդ բառերից mekēra(h)-ին դուգահեո μαζαζα «սուր» բառը հետազոտողները սովորաբար կապում են μαζομαι «մաքանել», կովել, պալքարել բայի հետ, որ համապատասխան դուգահեոներ ունի հայ. մաքառ, մաքառել բառերի մեջ. հուն. բառերի համեմատությունը իրան. *ha-mazan (> Αμαζών, άμαζα-αζαα) բառի հետ (<հ.-հ. mag'h-) համարվում է կասկածելի⁴¹։ Եթե իրոք հիշյալ բառերը պելասգյան ծագում ունեն, ապա այստեղ պետք է փնտրել նաև հայերենի աղբյուրը։ Maššā(h) «չխմորված հաց, բաղարջ» բառին դուգահեո μαζα (մե-գար. μαζα) «գարե հաց» բառը դուգահեո ունի հայ. մածնում-ի մեջ (եկպչել, թանձրանալ, մակարղել)։ Մակայն հուն. μαζα-ն μαζα «ծամել, հունցել, տը-րորել» բայի հետ միասին բխեցնում են հ.-հ. mag-արմատից, որտեղից և

³⁶ ψ -ով սկսվող հուն. բառերը կարող են բխեցվել և բխեցվում են հ.-հ. bhes-, bhs->ps- արմատից. հայերեն դուգահեոները կարող են ծագել հ.-հ. այլ հիմնաձևերից pou-, per-s- և այլն)՝ անմիջաբար (ո-ին դուգահեո ph-ով ձևերից) կամ միջնորդված կերպով (ենթադրյալ կամ փոխառություն)։

³⁷ Ըստ Վ. Գեորգիևի, որ բերում է նաև հայերենի հետ հաճախակի համեմատվող դոթ. σάω «երկիր, շրջան», գերմ. Gau, այլև հուն. γαζ «զատարկ տարածություն» բառերը (հ.-հ. ghsu-՝ g'heu-: g'hou- ձևի կողքին)։

³⁸ Ըստ Հ. Լեոնովանի (Հայ. արմ. բառ., 4, էջ 389) հու բառը ծագում է պարսկերենից։ Հայ. փուտ-ը նույնպես փոխառություն է համարվում պարսկերենից։

³⁹ Պել. բառը համեմատում են հուն. πῶς «զոհան փեղկ, դարպաս, մուտք, անցա-րան, անցք» բառի հետ, որի ծագումն անհայտ է։ Ենթադրվում է փոխառյալ լինելը (մը-շակութային բառ)։

⁴⁰ Հմտ. C. H. Gordon, „Minos“, 3, 1933, էջ 126 և հջ., В. Георгиев, Исследования..., 1939, էջ 103.

⁴¹ Հմտ. H. Frisk, Griechisches etymologisches Wörterbuch, Lief. 12, Heidel-berg, 1961, էջ 186.

հայերենը⁴²։ Այս պատճառով էլ ոմանք հակված են երբ. բառը փոխառություն համարելու հունարենից։ Հարցի վերջնական լուծումը կախված է պելասգերենում հ.-ե. σ -ի արտացոլման հարցի ճշգրտումից։ Ինչ վերաբերում է $\lambda\alpha\rho\pi\acute{\iota}\alpha$ — $\lambda\alpha\rho\pi\acute{\alpha}\varsigma$. -ծո՛ւ $\epsilon\rho\omega\varsigma$ զուգահեռին, ապա սրանց համապատասխան հայ. լամբար (ղամբար, լամպար) բառը փոխառություն է համարվում հունարեն $\lambda\alpha\rho\pi\acute{\alpha}\varsigma$. -ծո՛ւ-ից՝ հյուս. պահլավերենի միջնորդությամբ (հմտ. հուն. σ -ի դիմաց հայ. ρ -ի առկայությունը⁴³, իսկ լապտեր-ը՝ հուն. $\lambda\alpha\rho\pi\tau\epsilon\rho$ -ից՝ մանիք. պարսկերենի միջնորդությամբ⁴⁴։ վերջին բառի մեջ ρ -ի բացակայությունը հավանաբար նախնական չպետք է համարել։

Այս կապակցությամբ ավելորդ չենք համարում նշել, որ $qrt = qart$ «քաղաք» բառը (<պել. *kardas < հ.-ե. ghordhos՝ gherdh-ից, հմտ. հայ. գերդաստան) զուգահեռ ունի քարթվ. լեզուներում՝ վրաց. kartvel- «վրացի» = մեգր., ճան. kortu-, ալլե մեգր. karta «ամառային գոմ, փարախ» (*ցանկապատված վայր)⁴⁵։ սրանց աղբյուրը թերևս հնարավոր է փնտրել պելասգերենում կամ մերձավոր որևէ լեզվում։

5) Վ. Ինորգիեր⁴⁶, լիկիերենը համարելով բուն լիկիերենի (լուկերենի հաջորդը) և տերմիլերենի (պելասգերենի ուշ բարբառ) խառնուրդ, բերում է վերջինիս բնույթը որոշող մի շարք բառեր, որոնց հատուկ են պելասգերենի առանձնահատկությունները. բերենք այն դեպքերը, որոնք հայերեն զուգահեռներ ունեն և որոնք բնորոշվում են հնչյունական հետևյալ հատկանիշներով.

ա) Բաղաձայնների տեղաշարժով և երկու շնչեղներից առաջինի նախնական ապաշնչեղացմամբ.

kbi- (միլիերեն tbi-) «երկու» (հ.-ե. dui-), tuueri «երկու» [հ.-ե. d(u)u-]—հայ. երկի- (հմտ. երկեամ), երկու.

cbatra «դուստր»—դուստր.

zi- «օր»—տիւ.

tideimi- «տղա, երեխա» [հ.-ե. dhidēi-mi(1o)-]—դիեմ, դալակ, դալլ⁴⁷;

բ) Իմանացած ետնալեզվալիներին առաջնալեզվանացումով.

se «նրանց»—սա, -ս, սոյն, սմին.

-tata (հ.-ե. k'ontə-)— -սուն (երե-սուն, քառա-սուն և այլն).

teri, tern, tern «ձեռք, զորք»—ձեռն⁴⁸;

⁴² Հմտ. Հ. Ահառյան, Հայ. արմ. բառ., 4, էջ 738—740, Բ. Պոկոնին (Indo-germanisches etymologisches Wörterbuch, I, էջ 694), հենվելով Շեֆտելովիցի վրա, բերեցնում է maō- «թաց, թրջվել, ճարպոտ, բտած» արմատից։

⁴³ Հմտ. Հ. Ահառյան, Հայ. արմ. բառ., 3, էջ 150.

⁴⁴ Նույն տեղում, էջ 161, Եթե պելասգերենում հնարավոր է $\sigma' > c$ (ծ) անցումը, ապա ու միայն բացատրվում է այս դեպքը (հմտ. հուն. փոխառությունների ձևավորման տարբերությունները զանազան դեպքերում), այլև հնարավոր է դառնում հուն. $\epsilon\varsigma\alpha\lambda\omicron\varsigma$ «ցատկոդ, աշխույժ» (այծի մասին) բառին վերագրել պելասգյան ծագումը։ Հմտ. W. Meiering, LB, V, 2, էջ 50—51.

⁴⁵ Հմտ. Г. А. Климов Этимологический словарь картвельских языков, М., 1964, այլև Г. А. Меликишвили, «Вестник древней истории», М., 1965.

⁴⁶ В. Георгиев, Исследования..., էջ 153—162.

⁴⁷ Տիւ «ստինք», տիւտալի «ղայակ» բառերի մասին տե՛ս հեղինակի «Հայերենի խեթա-լուվական տարրերը» հոդվածը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1967, № 2, էջ 121.

⁴⁸ Կասկածելի է esbe-di «հեծելադորով» ձևի անմիջական բխեցումը հ.-ե. ekuo-ից՝ առանց իրանական միջնորդության։

դ) Շրթնայնացած ետնալեզվայինների ապաշրթնայնացումով.

-ce «ե» — -ք (ո-ք, ի-ք).

kadr-(nna) «չորս» — չորս, քառ.

c-(mmia) «հինգ» — հինգ:

դ) ծ > a անցումով.

-ahi (միլիերեն -asi) (հ.-հ. -osyo` -o-ով հիմքերի սեռական հոլովի վերջավորությունը) — ոլ (-ո-ով հիմքերի սեռական հոլովի վերջավորությունը).

χuga- «պապ» (hauho-s) — հաւ «պապ» (հմմտ. նաւ հայաս. Huggana- անձնանունը):

ե) Վանկարար ձայնորդների փոփոխության տիպով.

mnti, min̄ti «խորհուրդ» — իմանամ.

nun «ինն» (հ.-հ. neun) — ինն, ինունք⁴⁹:

§ 9. Եթե հայերը Բալկանյան թերակղզում, ապա և Փոքր Ասիայում գտնված ժամանակ շփման մեջ են եղել պելասգների կամ նրանց լեզվապես մերձավոր ցեղերի հետ, ապա բացի ծագումնային ընդհանրություններից հայերենի բառապաշարում պետք է լինեն բառեր, որոնք պելասգյան ենթաշերտի ազդեցության արդյունք կամ փոխառություններ են: Սրանց թվից ամենից առաջ պետք է հանել այն բառերը, որոնք հայերենին են անցել հունարենի կամ այլ լեզուների միջնորդությամբ համեմատաբար ուշ շրջանում (հմմտ. պել. πύργος, ուրարտ. burgana, ասոր. būrgā և հայ. բուրգն. պել. > հուն. πύργος և հայ. տառնիս և այլն): Պետք է կարծել, որ *t > m, *p > ph և այլ փոփոխություններով բնորոշվող հայերեն մի շարք բառերի աղբյուրը պելասգերենը կամ մերձավոր լեզուներն են. այսպես, հայ. փետուր բառը, որ հաճախ համեմատում են խեթ. pattar, -anas «թև» բառի հետ, լիովին բացասվում է պելասգյան հնչյունական օրենքներով՝ հ.-հ. netr > պել. *phe-tur (> հայ. փետուր): Թերևս պելասգերենից կամ մերձավոր լեզվից է գալիս նաև բուղթ -nj բառը (*t|to-՝ հ.-հ. tel- «հարթ տախտակ, թիթեղ» արմատից, որտեղից բաղ, բաղել, թիթել, թերևս նաև բաղանք և բաղք ժվի բարակ փառը)⁵⁰:

Ստորև բերենք մի շարք դուգահեոներ, որոնց դեպքում հայերեն բառերը կարող են ծագել պելասգերենից կամ մերձավոր լեզուներից.

ἄχινδρα «փուշ. ողնաշար» — ականդուկ (ակընդուն)⁵¹.

χαλνός «աչքի անկյուն» — կանթ (կոթ).

χαλας, χαλας «սթար, տապճակ, ձիու ծածկոց» (հ.-հ. k ogia) — կաշի, -ւոյ, -եայ.

χαλα-χαλ «շաղակրատ, մեծախոս, պարծենկոտ» — շաղակրատ⁵².

⁴⁹ Հայաստ-լիկիական կապերի մասին տե՛ս հեղինակի «Հայերենի և խեթա-լուվական լեզուների ծագումնային զուգադիպումները» հոդվածը, «Պատմա-բանասիրական հանդես», 1987, № 4 և «Բանբեր իրենանի համալսարանի», 1987, № 2:

⁵⁰ Հ. Աճառյանը բուղթ բառը կապում է լատ. titulus-ի հետ, որի ծագումը, սակայն, հայտնի չէ (ոմանք բխեցնում են հիշյալ արմատից):

⁵¹ Եթե հայերեն բառը ուշ շրջանի փոխառություն չէ կամ, ինչպես Հ. Աճառյանն է կարծում (Հայ. արմ. բառ., 1, էջ 78), ականդուկ ձևի սխալագրությունը:

⁵² Պել. բառի χαλα- մասը մեկնաբանում են որպես «մեծ» (< հ.-հ. k'olo-?): Այդ նույն իմաստը շաղակրատ բառի շաղ- մասին հատկացնում է Գ. Ղափանցյանը՝ համեմատելով խեթ. šalli- «մեծ» բառի հետ:

σελας «փալլ», σελένη «լուսին», σελαβή «բացվածք, անցք, ամպշող» — շող, ալլի «շաղալար թեթեր» (կամ թեթերի մասերից մեկը), շաղալարիլ «լուսնի կամ աստղերի շարվելը»:

σεργος «մի տեսակ ձուկ, սարգ», σεργιον, σεργιος «սարգիոն (թանկագին քար)» (հ.-հ. ser- «կարմիր») — շառ «մուգ կարմիր, արյունագույն, շեկ»:

σεργος «ղամբյուղ, կողով», σεργιος «հյուսված աման» (հ.-հ. ser-) — շարեւ:

σετος «հացահատիկ, հաց, պարեն, կեր» (հ.-հ. k'uei-d-) — շտեմ-արան «մթերանոց, ամբար»:

σειας «տնտես, տեր» — տամալ, -ոյ «տանիք», տանու (տէր):

σειας, σεινάεος «տաք, ջերմ»⁵⁴ — տենդ, -ոյ:

σειδα «ստեղծ», σειδος «սուտ» (հ.-հ. bheudh-) — սուտ, -ոյ, ստեմ:

*սառ- «փախչել» (? հմմտ. սարգոս «արագաշարժ, թեթե», որ Օ. Հաա- սը համեմատում է հայ. փոքր-ի հետ) — փախ, փախ-չ-իմ⁵⁵:

Ջուգահեռներ կան և տեղանունների մեջ, որոնցից հատուկ հիշատակու- թյան արժանի է հետևյալը:

Ἀχέρων, ալլի Ἀχελύς, Ἀχελως (գետանուններ, հ.-հ. ak^u- «ջուր, գետ») — Ախուրեան (ուրարտ. աղբյուրներում՝ Ahuriani) (գետանուն):

§ 10. Հայ-պելասգյան զուգահեռների ուսումնասիրությունը մեզ բերում է հետևյալ եզրակացություններին:

1) Հայերենը և պելասգերենը, լինելով սատեմալին լեզուներ, մերձենում են միմյանց նրանով, որ, ի տարբերություն մի շարք այլ սատեմալին լեզու- ների (հնդիրանական, բալթիկ-սլավոնական, ալբաներեն), ենթարկվել են նաև բաղաձայնների տեղաշարժի:

2) Չնայած սրան՝ պելասգերենի և հայերենի միջև բառալին մերձավո- րությունները սահմանափակ են, որ թերևս մասամբ բացատրվում է պելաս- գերենի բառապաշարի՝ սակավ ծանոթ լինելով: Առանձնապես պետք է նշել միեւնույն արմատներից ծագող բառերի իմաստալին զգալի հոսանքները:

3) Հայերենի՝ պելասգերենից կամ նրան մերձավոր լեզուներից ժառան- գած (ենթաշերտալին և փոխառյալ) բառերը ուղղակի քննության դեպքում մեծաթիվ չեն երևում: Սակայն հնարավոր է նման բառեր հայտնաբերել ոչ ուղղակի քննությամբ՝ նկատի առնելով պելասգերենի հնչյունական որոշ ա- ռանձնահատկությունները: Դրանցից *t > ut և *p > ph անցումներն ունեցող բառերի մասին խոսվեց վերևում: Այստեղ խոսենք երկու այլ դեպքի մասին. ա) եթե ճիշտ են պել. Ծ-ով և հայ. շ-ով զուգահեռները, ապա նշանակում է՝ պելասգերենը տարբերել է հ.-հ. s-ից ծագող Ծ-ն (=s) և -ից ծագող Ծ-ից (=s)⁵⁶, այդ դեպքում հայ. շմորիլ «նեխիլ, հոտել» (հ.-հ. smer- «հոտել») և շմոր-տակ «օճառախոտ» (հ.-հ. smeru- «ճարպ») բառերի աղբյուրը կարող է լինել պելասգերենը. բ) քանի որ պելասգերենում տեղի է ունենում միև-

⁵³ Թ. Պոկոնին (Idg. etym. Wörterbuch, I, էջ 394), հենվելով Պետերսոնի վրա, շող բառը բխցնում է k'uo-lo- ձևից [հ.-հ. k'eu- «լուսավոր(ել)», որ անհավանական է:

⁵⁴ Ըստ Վ. Գեորգիևի din-to- կամ di-nt ձևից (հ.-հ. dei- «շողալ»), ըստ Վ. Մեո- լինգենի՝ tepent->tepnt->tent ձևից (հ.-հ. tep- «տաք, ջերմ լինել»):

⁵⁵ Հմմտ. ծան. Ծ:

⁵⁶ Դրանք համընկել են հունարենում, որ ճ չունի:

նույն բառի մեջ հանդիպող հ.-ե. երկու շնչեղ ձայնեղներից առաջինի ապա-
շնչեղացում (հ.-ե. bh—dh > պել. p—d մոդելով), ապա հնարավոր է հա-
լերենի այդ պարզ բառերի պեղատվան ծագումը. հմմտ., թերևս, կարդամ
«ձայնել, զոչել, աղաղակել, հրավիրել, պանծլ, անվանել. բարձրաձայն կար-
դալ» և հին անգլ. græden «կանչել, աղաղակել» (հ.-ե. gher-dh- և ghrē-dh-
gher- արմատից):

Г. Б. ДЖАУКЯН

АРМЯНСКИЙ И ПЕЛАСГСКИЙ ЯЗЫКИ

Р е з ю м е

Статья является первым специальным исследованием армяно-пеласгских генетических совпадений и древнейших армянских заимствований из пеласгского и близких к нему языков.

Кратко характеризуя общие и разнящие фонетические черты армянского и пеласгского языков, автор переходит к изучению лексических изоглосс. Он устанавливает около ста генетических совпадений в области лексики. Среди них особо выделяются совпадения, близкие по типам образования основ и структурным особенностям корня (их число — полтора десятка). В конце статьи приводятся армянские слова, источниками которых могут быть пеласгский и близкородственные языки.